



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդի Ե.
Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց
Թեմա՝ Հոգեկան գործընթացների բնութագիրը

Վերապատրաստող, մենթոր՝ Սաթենիկ Սաֆարյան
Ուսուցիչ՝ Տիգրաանուհի Հակոբյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1 ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	4
1.1 ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ-ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ.....	4
1.2 ՀՈՒՉԱԿԱՍԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ.....	13
ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	23
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոգեկան գործընթացների բնութագիրը անունը կրող այս հետազոտական աշխատանքը, ներկայացնում է հոգեկան գործընթացների մասին, նրան տեսակների, գործառույթների մասին:

Աշխատանքը բովանդակային առումով բաղկացած է երկու բաժնից: Առաջին հատվածում ներկայացված է հոգեկան գործընթացների մասին, այնուհետև համառոտ կերպով խոսվում է ճանաչողական-իմացական և հուզականային գործընթացների մասին:

Աշխատանքի երկրորդ մասը կրում է հետազոտական բնույթ:

Աշխատանքը գրելիս աշակերտների և ծնողների հետ անցակացրել ենք հարցում հետևյալ թեմայով՝ Ինչպես է ուսուցիչը ազդում սովորողի հոգեբանության վրա: Կատարել ենք հարցում և իրականացրել վերլուծություն սխեմաների միջոցով:

Հետազոտական աշխատանքի նպատակներն են.

1. Ներկայացնել Հոգեկան գործընթացների ընդհանուր բնութագիր
2. Ուսումնասիրել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները
3. Ցույց տալ թե ինչպե՞ս կարող է ուսուցիչը ազդեցություն ունենալ սովորողների հոգեբանության վրա

Թեմայի արդիականությունը: Հոգեբանությունը գիտություն է մարդու հոգեկան ներաշխարհի մասին: Հոգեկան գործընթացները մարդու անբաժանելի ուղեկիցներն են իր ողջ կյանքի ընթացքում: Թեմայի ուսումնասիրությունը շատ արդիական է, քանի որ մենք ապրում ենք այնպիսի հասարակությունում, որտեղ տեղի են ունենում տարբեր գործընթացներ, երևույթներ, իրադարձություններ: Վերջինս մեծ ազդեցություն են թողնում մարդու հոգեկան գործընթացների վրա:

Հետազոտության հարցեր: Աշխատանքը գրելիս առաջնորդվել ենք հետևյալ հարցադրումներով:

1. Ինչպե՞ս ուսուցիչը կարող է ազդեցություն ունենալ աշակերտների հոգեբանության վրա
2. Պատմության դասի ժամանակ իրականացվող մեթոդները ի՞նչպես են զարգացնում աշակերտի հոգեկան գործընթացները:

ԳԼՈՒԽ 1 ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ-ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Հոգեբանությունը գիտություն է մարդու հոգեկան աշխարհի մասին: Հասարակական այս գիտությունը ուսումնասիրում է մարդու հոգեկանը, հոգեկան ակտիվությունը, հոգեկան գործունեությունը և դրա դրսևորման ձևերը: Հոգեբանությունը արդի գիտություն է և առնչվում է մարդու հետ իր ողջ կյանքի ընթացքում: Հոգեբանական խնդիր կարող ենք ունենալ յուրաքանչյուրս տարբեր տարիքում:

Մարդու հոգեկանը ձևավորվում ու զարգանում է արտաքին աշխարհի հետ շփման ընթացքում, հատկապես ուսուցման և աշխատանքի ժամանակ: Ըստ կատարված հետազոտությունների հոգեկանի զարգացումը սոցիալական պայմանավորվածություն ունի և այն զարգանում է հասարակության մեջ արժեքների յուրացման գործընթացում: Հոգեկանը մարդու ներաշխարհն է, որը ձևավորում ու զարգանում է արտաքին աշխարհի փոխազդեցության գործընթացում:

Հոգեկան գործընթացը հոգեկան երևույթի տեսակ է, որն իրենից ներկայացնում է հոգեկան գործողությունների փոփոխություն ժամանակի որոշ հատվածներում: Հոգեկան գործընթացները բաժանվում են երկու խմբի՝ ճանաչողական և հուզականային.

- 1) Ճանաչողական գործընթացներն են մարդու զգայությունները, ընկալումը, հիշողությունը, ուշադրությունը, երևակայությունը, խոսքը, մտածողությունը:
- 2) Հուզականային գործընթացներն են մարդու հույզերը, զգացմունքները և կամքը

Աշխատանքում կիսուսնք աշակերտ-ուսուցիչ հոգեբանական հարաբերությունների մասին, թե ուսուցիչը ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ աշակերտի հոգեկան գործընթացների վրա: Մինչ այդ համառոտ ներկայացնենք հոգեկան գործընթացների մասին:

Ճանաչողական գործընթացներ: Ուշադրություն:

Ըստ Ուշինսկու Ուշադրությունը հենց այն դուռն է, որի միջոցով անցնում է այն ամենը, ինչը մեր հոգեկանի մեջ է թափանցում արտաքին աշխարհից:

Ուշադրությունը հատուկ տեղ է գրավում հոգեկան գործընթացների մեջ: Ուշադրությունը մարդու հոգեկան գործունեության ուղղվածությունն ու կենտրոնացվածությունն է դեպի որոշակի առարկաները, երևույթները, որոնք անձի համար ունեն նշանակություն:

Ուշադրություն դարձնել ինչ-որ առարկայի վրա՝ նշանակում է հոգեկան գործունեությունն ուղղել դեպի այդ առարկան: Աշակերտի ուշադրությունը դասի ժամանակ հիմնականում գրավում են այն երևույթները, որոնք նրա համար հետաքրքիր են կամ նշանակալից, այսինքն կարող են բավարարել նրա այս կամ այն պահանջմունքը: Հաշվի առնելով այդ հանգամանքը ուսուցիչը պետք է օգտագործի նոր մեթոդներ, սովորի ուշադրությունը դրա վրա կենտրոնացնելու վրա: Կենտրոնացումը ուշադրության առանձնահատկություններից մեկն է, այն արտահայտում է ուշադրության կենտրոնացվածության աստիճանը որը ուղղվում է ինչ-որ օբյեկտի վրա:

Ուշադրությունը որպես հոգեբանական գործընթաց բաժանվում է 5 տեսակների:

1. Արտաքին
2. Ներքին
3. Կամաձին
4. Ոչ կամաձին
5. Հետկամաձին

Արտաքին ուշադրությունը այն է, երբ մարդու հոգեկան գործունեությունը ուղղվում է դեպի արտաքին աշխարհի առարկաները: Օրինակ աշակերտները ուշադրությամբ հետևում են ուսուցչի կատարած ժեստերին և շարժումներին դասը բացատրելիս: Արդյունքում ուսուցիչը կարող սովորողների արտաքին ուշադրությունը գրավել իր տեքստով, Շարժումներով և այլն:

Ներքին ուշադրությունը այն է, երբ մարդու հոգեկան գործունեությունը ուղղված է դեպի սեփական ներաշխարհի բովանադակությունը: Օրինակ դասի ժամանակ սովորողը կենտրոնանում է ոչ թե արտաքին աշխարհի վրա, այլ իր ներաշխարհի մասին: Մտածում է օրինակ ապագայում ինչ կարող է անել հաջողության հասնելու համար:

Կամաձին ուշադրությունը այն է, որ մարդը ունենալով կոնկրետ նպատակ և կամքի լարումով հոգեբանական գործունեությունն ուղղում է որևէ առարկայի կամ երևույթի վրա: Օրինակ Պատմության դասի ժամանակ ուսուցիչը հանձնարարում է կատարել քննարկում ինչ-որ պատմական փաստի շուրջ, և աշակերտները իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են այդ քննարկմանը մասնակցելու համար:

Ոչ կամաձին ուշադրությունը, երբ մարդն կր կամքից անկախ սկսում է ուշադրություն դարձնել այս կամ այն որևէ երևույթի վրա: Կարող ենք ներկայացնել շատ հաճախ հանդիպող մի օրինակ: Դասապրոցեսի ընթացքում սովորողները կենտրոնացված լսում են նոր դասը, սակայն

դասասենյակից դուրս լսվում է աղմուկի ձայն, և ակամայից սովորողների ուշադրությունը գնում է դեպի այդ կողմ:

Յետկամածին ուշադրությունը, այն տեսակն է, երբ սկսում է որպես կամածին ու դառնում է պահի ազդեցության տակ ոչ կամածին: Օրինակը կրկին բերենք աշակերտների շրջանում: Պատմության դասաժամին աշակերտը կենտրոնանում է իրեն տված առաջադրանքի վրա, բայց պահի տակ ուշադրությունը տեղափոխում է իր դասընկերոջ հեռախոսի վրա և սկսում կենտրոնանալ այդ ուղղությամբ: Այս տեսակը հետկամածին ուշադրությունն է:

Յոգեկան մյուս գործընթացը որի մասին կներկայացնեն ստորև դա Չգայություններն են:

Չգայությունը պարզագույն ճանաչողական-իմացական գործընթաց է, որի միջոցով մարդը պատկերացում է կազմում արտաքին աշխարհի առարկաների և երևույթների առանձին հատկությունների մասին:

Չգայությունները հնարավորություն են տալիս իմանալու նաև մարդու մարմնի ներքին վիճակների, տարածության մեջ մարմնի դիրքի, շարժումների և այլնի մասին:

Յոգեկան գործընթացների մեջ զգայությունները աշխարհի ճանաչման առաջին և ինչու չէ ամենակարևոր աստիճանն են:

Չգայությունը պարզագույն հոգեկան գործընթաց է, որը հնարավորություն է տալիս մարդուն արտացոլելու կյուբական աշխարհի առարկաների ու երևույթների առանձին հատկանիշներ:

Չգայությունները լինում են 3 տեսակ

1. Էքստերոցեպտիվ
2. Ինտերոցեպտիվ
3. Պրոպրիոցեպտիվ

Էքստերոցեպտիվը այն զգայություններն են, որ տեղեկություն են տալիս մարդուն իմ մարմնից դուրս գտնվող երևույթների ու գործընթացների մասին, նրան կապելով արտաքին աշխարհի հետ:

Ինտերոցեպտիվ զգայությունները նրանք են, որոնք առաջանում են մարդու ներքին օրգաններում գտնվող ընկալիչների վրա

Պրոպրիոցեպտիվ զգայությունները այն են, որոնք ուղղեղին տեղյակ են պահում մարմնի տարբեր մասերի՝ տարածության մեջ գրաված դիրքի մասին:

Բերենք մեկ օրինակ: Դասի ժամանակ ուսուցիչը սովորողին առաջարկում է փակել աչքերը և վերցնել սեղանի վրա դրված իրերից մեկը: Աշակերտը սեղանի վրա դրված իրերից վերցնում է մի իր, այնուհետև ուսուցիչը հարց է տալիս ի՞նչ ես զգում այդ իրին դիպչելով, ի՞նչ կարող ես ասել դրա մասին: Աշակերտի մոտ առաջանում է մաշկային զգայություն, որը բավարար է ճանաչելու առարկան: Այս հնարքը կարելի է հաճախ կիրառել աշակերտների շրջանում, որպեսզի հանգստան աշակերտները իմ ակտիվացնեն իրենց երկու հոգեկան գործընթացները զգայությունները և ուշադրությունը:

Հոգեկան իմացական-ճանաչողական գործընթացներից է ընկալումը: Ընկալումը առարկաների և երևույթների ամբողջական պատկերների արտացոլումն է մարդու հոգեկանում՝ զգայարանների վրա դրանց անմիջական ազդեցության շնորհիվ:

Առանց զգայությունների ընկալումն անհնար է: Բերենք ևս մեկ օրինակ Պատմության դասից:

Դասի թեման է Վարդանանց պատերազմը: Աշակերտները ուսումնասիրելով թեման ծանոթանում են թեմայի բովանդակությանը, կաևոր իրադարձություններին, գաղափարներին, սակայն յուրաքանչյուր սովորող այս թեման կարող է հասկանալ և ընկալել տարբեր կերպ: Օրինակ մարզպան Վասակ Սյունու կերպարի վերլուծություն անելու ժամանակ, սովորողների մի մասը նրան դիտում է որպես հայրենասեր գործիչ, իսկ մյուս մասը որպես դավաճան հայ: Այսինքն այս ամենը սովորողի մոտ առաջանում է զգայությունների և ընկալման միջոցով:

Ընկալման գործընթացն ընթանում է մտածողության, խոսքի, զգացմունքների, կամքի հետ կապի մեջ:

Ընկալումը ունի հետևյալ 6 առանձնահատկությունները

1. Ապերցեպցիա
2. Ամբողջականություն և կառուցվածքայնություն
3. Իմաստավորվածություն
4. Հաստատությունուն
5. Ընտրականություն
6. Առարկայականություն

Այն ամենը ինչն մարդն ընկալում է, անհետ չի կորչում: Ուղեղի մեծ կիսագնդի կեղևում պահպանվում են գրգռման գործընթացների հետքերը: Դրա շնորհիվ մարդը կարողանում է մտապահել, իսկ հետագայում վերարտադրել յուրացրած գիտելիքները: Այդ գործընթացը հիշողությունն է:

Հիշողությունը ընկալվածը հոգեկանում մտապահելու, պահպանելու և հետագայում վերարտադրելու ունակությունն է: Հիշողություն ունեն բոլոր կենդանի էակները և նույնիսկ որոշ տեխնիկական սարքեր, օրինակ՝ մաթեմատիկական հաշվիչ մեքենաները:

Հիշողության գործընթացներն են

1. մտապահումը
2. պահպանումը
3. վերարտադրումը
4. մոռացումը

Այս գործընթացները փոխադարձորեն կապված են միմյանց հետ:

Հիշողությունը, որպես հոգեկան գործընթաց բաժանվում է 3 մասի, որոնք իրենք հերթին բաժանվում են ենթամասերի:

1. Ըստ գործունեության նպատակի
2. Ժամանակի
3. Ըստ մտապահվող նյութի

Ըստ գործունեության նպատակի հիշողությունը լինում է կամաճին և ոչ կամաճին:

Կամաճին հիշողության դեպքում մարդը գիտակցաբար իր առջև նպատակ է դնում, ճիգեր գործադրելու մտապահելու որոշակի տեղեկատվություն: Օրինակ բերենք Պատմության դասից: Աշակերտին հանձնարվում է մտապահել Հայոց թագավորների անունները իրենց գահակալման ժամանակագրական հաջորդականությամբ: Աշակերտը այդ ամենը սովորում է, մտաբերում է այնպես, որպեսզի պահպանի այն, հետագայում վերարտադրելու համար:

Հիշողության այն տեսակը որի դեպքում մարդն իր առջև գիտակցորեն մտապահելու, իսկ ընկալվածը պահելու և վերարտադրելու նպատակ չի դնում կոչվում է Ոչ կամաճին:

Ժամանակային առումով հիշողությունը բաժանվում է 3 տեսակի

1. Կարճատև հիշողություն
2. Երկարատև հիշողություն
3. Օպերատիվ հիշողություն

Կարճատև հիշողություն անվանում են տեղեկատվությունը մեկ անգամ ընկալելուց անմիջապես հետո մտքում պահելու և վերարտադրելու երևույթը: Օրինակ աշակերտին ասում են հիշի այս թվերը մի ժամից հարցնեմ ասես, աշակերտը լսում է ընկալում այդ թվերը և կարճ ժամանակ անց մոռանում:

Տևական, երկարատև հաճախ անվանում են նաև կոնսոլիդացիա. այս տեսակի առանձնահատկությունը հետևյալն է, որ ընկալված տեղեկությունը պահվում է երկար ամիսներ, տարիներ, կամ նույնիսկ ամբողջ կյանքի ընթացքում: Սովորաբար ինֆորմացիան տևական հիշողության մեջ անցնում է ընկալվածը կրկնելու և մտապահվածը վերարտադրելու շնորհիվ: Օրինակ աշակերտի մոտ երկարատև հիշողությունը պատմությունից զարգացնելու համար, պետք է անել հետադարձ կապ, նախորդ նյութերը նայելու վերապահելու համար:

Հիշողության մյուս տեսակը ժամանակային առումով դա օպերատիվ հիշողությունն է: Այն ապահովում է տվյալ պահին իրականացվող գործունեության միջանկյալ արդյունքների մտապահումը և օգտագործումը: Բարդ գործողության իրականացումը մարդուց պահանջում է միջանկյալ արդյունքների մտապահում՝ հետագա գործողությունների մեջ օգտագործելու նպատակով: Այդ պատճառով օպերատիվ հիշողությունն իր բնույթով տարբեր է հիշողության կարճատև և երկարատև տեսակներից:

Հիշողությունը ինչպես վերը նշվեց բաժանվում է մի քանի տեսակի ինչպես նաև ըստ մտապահվող նյութի: Մտապահվող նյութից ելնելով տարբերակում ենք հիշողության 4 տեսակ

1. Շարժողական հիշողություն
2. Հուզական հիշողություն
3. Պատկերավոր հիշողություն
4. Բառատրամաբանական հիշողություն

Շարժողական հիշողությունը շարժումների մտապահումն ու վերարտադրությունն է: Օրինակ քայլել, գրել խոսել և այլն

Հուզական հիշողությունը հույզերի ու հուզական վիճակների մտապահումն ու վերարտադրությունն է: Մարդը սովորաբար հիշում է ոչ թե առանձին հույզեր, այլ դրանցով հագեցված պատկերների մի խումբ: Օրինակ երաժշտություն լսելիս մարդու հիշողության մեջ գալիս են տարբեր պատկերներ:

Պատկերավոր հիշողությունը այն է, որ տեղեկատվությունը մտապահվում ու վերարտադրվում է մտապատկերների միջոցով: Օրինակ տեսողական լսողական հոտառական և այլն:

Եվ վերջապես բառատրամաբանական հիշողություն: Դա բառերի, հասկացությունների ձևով արտահայտված տեղեկատվության մտապահումն ու վերարտադրումն է:

Այս բոլորը օգտագործվում են պատմության գրեթե բոլոր ժամերին և բոլոր դասարաններում:

Հոգեկան գործընթացների մեջ առանձնանում է մարդու երևակայությունը: Երևակայությունը մտապատկերների հետ կատարվող այնպիսի գործողություն է, որի արդյունքում ստացվում են դրանց նոր համակցություններ: Երևակայական պատկերների ընկալումը առաջանում

Են հիմնականում ոչ կամաժին ձևով, սակայն կան այնպիսի պատկերներ, օբյեկտներ որոնք մարդու մեջ առաջանում են հատուկ ջանքերի շնորհիվ: Սա հաճախ անվանվում է կամաժին երևակայություն:

Երևակայության գործընթացի բնութագրիչները երեքն են.

1. Ինքնուրույնություն
2. Ստեղծագործականություն
3. Ինքնատիպություն

Այս բնութագրիչներից ելնելով հոգեբանության մեջ առանձնացվում է երևակայության երկու տեսակ

1. Վերարտադրական երևակայություն
2. Ստեղծագործական երևակայություն

Վերարտադրական երևակայությունը ծավալվում և զարգանում է նկարագրությունների սխեմաների, գծագրերի հիման վրա: Այս տեսակը լայնորեն օգտագործվում է մարդու գործունեության տարբեր տեսակներում, այդ թվում՝ ուսուցման մեջ: Դարձյալ օրինակը բերենք Պատմության դասից: Աշակերտը գալիս է դասն է ներկայացնում և զուգահեռ ավելի պատկերավոր դարձնելու համար այն ցույց է տալիս քարտեզի վրա:

Ստեղծագործական երևակայությունը, իր տարբերությունն վերարտադրականի ենթանդրում է նոր պատկերների, իրերի մեքենաների, արվեստի գործերի ստեղծում որոնք չունեն իրենց նմանները: Ստեղծագործական երևակայության շնորհիվ մարդկանց հաջողվում է առաջին անգամ ստեղծել ինքնատիպ պատկերներ, որոնք իրագործվում են հասարակական նշանակություն ունեցող նյութական արդյունքներում: Երևակայության այս տեսակը կարևոր դեր է կատարում մարդկանց ստեղծագործական գործունեության մեջ: Բերենք ևս մեկ օրինակ

Պատմության դասը արդյունավետ իրականացնելու համար, օգտագործվում են տարբեր տեսակի ժամանակակից մեթոդներ: Ներկայացնեն սեփական փորձս, աշակերտների ստեղծագործական երևակայությունը ներկայացնելու համար:

Սովորում ենք Հայոց պատմությունից մեկ թեմա: Աշակերտներին հանձնարվում է, օգտագործելով ստեղծագործական երևակայությունը փորձել այդ թեմայի հիման վրա գրել ֆիլմի սցենար, ինչպես աշակերտը այդ իրադարձությունների վրա կնկարահանի ֆիլմ: Արդյունքում սովորողները օգտագործում են իրենց ստեղծագործական երևակայությունը և փորձում աշխատանքը անել շատ լավ:

Հոգեկան գործընթացների մեջ առանձանում է մտածողությունը, որը զարգանում է մարդու մոտ երևակայությանը զուգահեռ:

Ճանաչողական գործընթացների մեջ ամենաբարդ երևույթը մտածողությունն է: Մտածողության տակ հասկանում ենք մարդու իմացական գործընթաց, որի միջոցով իրականությունը արտացոլվում է ընդհանրացված և խոսքով միջնորդավորվախ ձևով:

Եթե ընկալման ընթացքում մարդն արտացոլում է առանձին և կոնկրետ առարկաներ, ապա մտածողության շնորհիվ նա արտացոլում է առարկաների և երևույթների այն կողմերն ու օրինաչափությունները, որոնք մատչելի չեն անմիջական զգայական արտացոլման համար:

Մտածողությունը շրջապատող աշխարհի միջնորդավորված և ընդհանրացված իմացությունն է: Մտածողությունն էապես նորի որոնման, հայտնագործման գործընթաց է:

Աշակերտների մոտ մտածողությունը զարգանում է տարրական դասարաններից: Աշակերտների մտածողության զարգացանում է միառժամանակ տարբեր առարկաներ սովորելուց, նոր մեթոդիկաներով աշխատելուց և այլն:

Մտածողությունը բաժանվում է հետորյալ երեք տեսակների

1. Ակնառու-գործնական
2. Ակնառու-Պատկերավոր
3. Խոսքային տրամաբանական

Ակնառու-գործնական մտածողությունն իրագործվում է առարկաների հետ կոնկրետ, շոշափելի գործողություններ կատարելու ընթացքում:

Ակնառու-պատկերավոր մտածողությունն իրագործվում է մտապատկերների հետ կատարվող գործողությունների միջոցով: Մտածողության այս տեսակը առաջանում է հիմանկանում նախադպրոցականների մոտ:

Խոսքային տրամաբանական մտածողությունը ընթացնում է խոսքի, լեզվի պարտադիր մասնկացությամբ, այսինքն՝ վերացական հասկացությունների և դատողությունների ձևով: Այն արդեն զարգանում է երեխաների մոտ դպրոցական հասակում:

Մտածողության ուսումնասիրությամբ զբաղվում է նաև փիլիսոփայությունը:

Մարդ տարբերվում են իրենց մտածողության անհատական առանձնահատկություններով

1. Մտածողության ինքնուրույնությունը
2. Մտքի լայնություն
3. Մտքի խորություն
4. Մտքի ճկունություն

5. Մտքի արագություն

Աշակերտի մոտ մտածողությունը զարգանում է վերը նշված առանձնահատկություններով: Դա նաև կիրառվում է Պատմության թեմաները ուսումնասիրելու վրա: Որպես պատմության ուսուցիչ նշենք որ մտածողության վերը նշված տեսակները օգտագործելիս, աշակերտի մոտ առաջանում է քննադատական մտածողություն:

Չոգեկան գործընթացներից է խոսքը և խոսքային հաղորդակցումը: Այս երևույթը կապված է մարդու հետ իր ամբողջ կյանքի ընթացքում: Մարդկանց հասարակական կյանքը և կոլեկտիվ աշխատանքը առաջացնում է մշտապես միմյանց հետ հաղորդակցվելու անհրաժեշտություն, ինչը լիակատար ձևով իրականացվում է խոսքի օգնությամբ:

Աշակերտների մոտ գրագետ խոսքի և հաղորդակցման ձևեր, հմտությունները ձևավորվում են տարրական դասարաններից, զարգանում միջին դպրոցում ամրապնդվում ավագ դպրոցում:

Խոսքային հաղորդակցումը կոչվում է նաև Վերբալ, որը լինում է երկու տեսակի

1. Բանավոր հաղորդակցում
2. Գրավոր հաղորդակցում

Բանավոր հաղորդակցումը լինում է մարդկանց հետ անմիջական հաղորդակցման ժամանակ: Խոսքի այս տեսակը հաճախ դրսևորվում է երկխոսությամբ և մենախոսությամբ: Բանավոր երկխոսությունը տեղի ունենում երկու կամ ավելի զրուցակիցների միջև խոսակցության ձևով: Մենախոսական խոսքը մեծ տեղ է գրավում մարդկանց հաղորդակցման գործընթացում: Մենախոսական ձևերից են դասասխոսությունները, զեկուցումները, ելույթները, հայտարարությունները:

Գրավոր հաղորդակցումը, բառը ինքնին հուշում է որ գործ ունենք գրավորի հետ: Կյանքի ընթացքում մարդիկ, հիմա կարող ենք ասել նույնսիկ մեծամասնությունը նախընտրում է գրավոր խոսքային հաղորդակցումը դիմումներ, նամակներ, էլեկտրոնային փոստով հաղորդագրություններ գրելիս:

Բերենք հերթական օրինակը Պատմության դասից: Աշակերտներին հանձնարավում է գործնական աշխատանք, ուսումնասիրել պատմական մի թեմա, օգտվել լրացուցիչ աղբյուրներից, համացանցից հանրագիտարաններից, կազմել ռեֆերատ, կամ վերլուծական աշխատանք: Պատրաստել զեկուցում գրավոր և բանավոր այն ներկայցնել: Այս աշխատանքը օգնում է աշակերտների մոտ զարգացնել խոսքային հաղորդակցման տեսակները թե՛ գրավոր, և թե՛ բանավոր:

1.2 ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ԳՈՐԾԸԹՆԱՑՆԵՐ

Հոգեբանական գործընթացերը ինչպես վերը նշվեց, բաժանվում են երկու տեսակների: Այս տեսակներից մեկը Հուզականամային գործընթացն է: Այն ուսումնասիրելու համար գործ ունենք այս երևույթների հետ

1. Չգացմունքներ
2. Կամք

Խոսենք Չգացմունքների մասին:

Չգացմունքները մարդու՝ շրջապատի առարկաների, իրերի նկատմամբ ունեցած կենսական հարաբերությունների արտացոլումն են: Չգացմունքները գունազարդում են մարդու հոգեկան կյանքի բոլոր կողմերը: Չգացմունքների արդյունքում մարդը տարբեր ձևով է վերաբերում իրական աշխարհի առարկաներին և երևույթներին; Հոգեբանության մեջ գոյություն ունեն զգացմունքների 4 որակներ

1. Դրական զգացմունքներ
2. Բացասական զգացմունքներ
3. Երկվալենտ զգացմունքներ
4. Մշուշապատ զգացմունքներ

Դրական զգացմունքները ցույց են տալիս, թե ինչն է բավարարում մարդուն: Օրինակ աշակերտը իրեն բավարարած է զգում երբ լիարժեք պատրաստ է օրվա դասին և ուսուցչի կողմից արժանանում է գնահատանքի խոսքերի:

Բացասական զգացմունքները ցույց են թե ինչն է խանգարում իրենց պահանջմունքներին: Օրինակ Պատմության ժամին աշակերտներից մեկը դասին պատրաստ չէ և մտածում է ինչ կասի ուսուցիչը իր մասին, երբ իմանա որ այս նյութը չի սովորել

Երկվալենտ զգացմունքների դեպքում հաճույքը և տառապանքը միասին են գոյակցում մարդու մոտ: Օրինակ եթե աշակերտը սիրահարված է իր դասընկերուհուն և սիրում է և խանդում:

Մշուշապատ զգացմունքներ: Չգացմունքների օբյեկտի նկատմամբ այս տիպի հուզական վերաբերմունքը սովորաբար կարճատև հուզական ռեակացիայի անորոշություն է, որը կապված է նրանում կողմնորոշվելու հետ:

Բերենք հերթական օրինակը: Աշակերտը հանդիպում է նոր երիտասարդ ուսուցչի, ով պետք է դասավանդի իրեն: Նա սկսում է այդ ուսուցչին առանձնացնել իր համար, առաջանում է զարմանք հետաքրքրություն և այլն:

Հասարակության մեջ մարդը հաճախ է հանդիպում այս հարցին. Ի՞նչ զգացմունք ապրեցիր

Հոգեբանության մեջ գոյություն ունեն զգացմունքների ապրման մի քանի ձևեր: Դրանք են՝

1. Հույզեր
2. Հուզական տոն
3. Աֆեկտներ
4. Տրամադրություն
5. Սթրես

Համառոտ անդրադառնանք այս ձևերին:

Հույզը զգացմունքի ապրման գլխավոր ձևերից մեկն է: Հույզ է, օրինակ, ե՞րբ լսում ես ինչ-որ հաճելի երաժշտություն և դրա ազդեցության տակ փոխվում է մարդու հուզական գործընթացը: Տարբեր տեսակի զգայությունների հետ առաջացած հուլազական վիճակները կոչվում են հուզական տոն:

Աֆեկտները արագ զարգացով և համեմատանար կարճատև հուզական ապրումներն են: Աֆեկտների դեպքում խիստ թուլանում է կամայաին ինքնավերահսկողությունը:

Տրամադրություն: Սա անձի տևական հուզական վիճակն է, որը որոշակի ժամանակահատվածում բնորոշ երանգ է հաղորդում նրա գործունեությանն ու մյուս հոգեկան գործընթացներին:

Սթրեսը հոգեկան լարվածության վիճակ է: Այն առաջանում է այն ժամանակ, երբ մարդը ստիպված է լինում հարմարվել բարդ անընդհատ փոփոխվող կենսական պայմաններին, կամ լուծել իր համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրները: Սթրեսի զարգացման մեջ տարբերում են երեք հիմնական փուլ՝ տագնապայնություն, դիմադրություն, հյուժում:

Չզացմունքները լինում են նաև բարձրակարգ, որոնց մեջ մտնում են հետևյալ 4 տեսակները

1. Պրաքսիկ զգացմունքներ
2. Բարոյական զգացմունքներ
3. Բանական զգացմունքներ
4. Գեղագիտական զգացմունքներ

Պատմության դասաժամին հաճախ աշակերտների մոտ հանդիպում ենք բարոյական ու բանական զգացմունքներին: Օրինակ աշակերտները պատմական հերոսամարտ ներկայցնելիս հայրենասիրության զգացում են ապրում: Կամ տրամաբանական հարցեր, գլոբալկոտրուկներ լուծելիս աշակերտների մոտ առաջանում է հետաքրքրասիրություն, ոգեշնչում և այլն:

Հաճախ մենք հանդիպում ենք այսպիսի մի արտահայտության: *Դու կամքից թույլ մարդ ես, կամ դու ուժեղ կամքի տեղ մարդ ես*

Այստեղ մենք գործ ունենք հուզականային մյուս գործընթացի հետ, որ կամքն է:

Կամքը մարդու ակտիվության հատուկ ձև է, այն դրսևորվում է մարդու գործունեության բոլոր ձևերում: Կամքը մարդու կողմից իր վարքի և գործունեության գիտակցական կառավարումն է ներքին և արտաքին դժվարությունների հաղթահարման միջոցով:

Կամային գործողությունները լինում են պարզ և բարդ:

Մարդու կամային հատկություններից են

1. Նպատակաուղղվածությունը
2. Չսպվածությունը
3. Ինքնուրույնությունը
4. Համառությունը
5. Հաստատակամությունը
6. Կարգապահությունը
7. Ինքնատիրապետումը

Կամքը շատ կարևոր հոգեկան գործընթաց է, հատկապես աշակերտների հոգեբանորեն զարգացման գործում: Աշակերտի մոտ կամքի բարձր զգացում ապահովելու գործում կարևոր դերակատարություն ունեն և ծնողները և ուսուցիչները: Ամփոփելով այս ամենը նշենք 5-րդ դարի հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթի խոսքերը. *Կամքը յուրաքանչյուր հաջողության գրավականն է:*

ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇՎԿԵՐՏ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները վերլուծելու համար, կամեցի՞ք հարցաթերթիկ և ուղարկեցի՞ք աշակերտներին և ծնողներին: Հարցմանը մասնակցել են 6-12-րդ դասարանի աշակերտները: Վերլուծության նպատակն է, պարզել թե ինչպես են հարաբերությունները զարգանում աշակերտների և ուսուցիչների միջև թե դպրոցում և թե դպրոցից դուրս:


Ներկայացնենք նախ աշակերտների տեսակետները և կարծիքները: Սովորողները տվել են բավականին հետաքրքիր տարբերակներ: Հարցաթերթիկում ներառված էին հետևյալ հարցերը

1. Անուն Ազգանուն
2. Սեռը
3. Տարիքը
4. Դպրոցը
5. Դասարանը
6. Սիրելի առարկաները
7. Սիրով են աշակերտները նստում դասերին
8. Ազատ եք զգում ձեզ դասարանում դասի ժամանակ
9. Ի՞նչ եք կարծում ուսուցիչը կարող է հոգեբանորեն ազդեցություն ունենալ աշակերտի վրա
10. Ուսուցիչը կարող է աշակերտին դնել ճիշտ ուղու վրա
11. Ուսուցիչը հնարավոր է գիտելքիներ ստանա իր աշակերտներից
12. Ուսուցիչը կարող է իդեալ լինել աշակերտի համար
13. Ուսուցիչը և աշակերտները կարող են ընկերանալ դպրոցից դուրս ամօրյա կյանքում
14. Ունե՞ք ուսուցիչ ու՞մ հետ շփվում եք դպրոցից դուրս
15. Պատահել է այնպիսի դեպք, ե՞րբ հոգեբանորեն նեղված եք եղել և դիմել եք ուսուցչի որ օգնի ձեզ
16. Եղել է իրավիճակ որ վիրավորել կամ նեղացրել եք ձեր ուսուցչին հետո զղջացել դրա համար

17. Եղել է որ ուսուցիչը վիրավորվել կամ նեղացել է ձեզանից
18. Ձեր ուսուցիչներից կան մարդիկ ովքեր ձեզ վարկաբեկել են ուրիշների մոտ
19. Ի՞նչ եք կարծում ուսուցիչը կարող է ազդել սովորողի հոգեբանության վրա
20. Ուսուցիչը կարող է ավագ ընկեր լինել աշակերտների համար
21. Եթե աշակերտը ընտրել է սխալ ուղի, հնարավոր է ուսուցիչը օգնի իրեն կանգնել ճիշտ ուղու վրա
22. Ձեզ դուր է գալիս որ ուսուցիչը տարբեր ինտերակտիվ մեթոդներով է անցկացնում դասը
23. Ուսուցիչը աշակերտի հոգեկան ո՞ր գործընթացների վրա կարող է ազդեցություն ունենալ
24. Ուսուցիչը կարող է ներազդել սովորողի մասնագիտական կողմնորոշման վրա
25. Ի՞նչ տարբերակներ կառաջարկեք ուսուցիչների հետ լավ հարաբերություններ ունենալու համար


Այս հարցադրումների շուրջ կատարենք վերլուծություն: Հարցմանը ակտիվ մասնակցություն են ցուցաբերել 16-18 տարեկան աշակերտները:

Տարիքը
12 ответов




Ակտիվ մասնակցություն են ցուցաբերել հատկապես 12-րդ դասարանի աշակերտները

Դասարանը
12 ответов




Այն հարցին թե սիրով են նստում դասերին պատասխանել են այսպես

Սիրով եք նստում դասերին
12 օրհետո




Ազատ եք զգում ձեզ դասարանում դասարանում դասի ժամանակ հարցին սովորողների մի մասը պատասխանել է այո, իսկ մի մասը կախված առառարկայից

Ձեզ ազատ եք զգում դասարանում, դասի ժամանակ
12 օրհետո



Աշակերտների մեծամասնությունը կարծում են, որ ուսուցիչը կարող է մեծ ազդեցություն ունենալ իրենց հոգեբանության վրա


Ի՞նչ եք կարծում ուսուցիչը հոգեբանորեն կարող է ազդեցություն ունենալ սովորողի վրա
12 օրհետո



Ուսուցիչը կարող է ավագ ընկեր լինել աշակերտի համար: Այս հարցը դուր է եկել շատ աշակերտներին և անկեղծորեն պատասխանել են այո: Այսինքն ուսուցիչը պետք այնպիսի

հոգեբանությունն օգտագործի, որպեսզի աշակերտները իրենց համարեն ավագ ընկեր և բազմաթիվ հարցերով կարողանան կիսվել նրանց հետ ճիշտ ուղղություն ստանալու համար:


Ուսուցիչը կարող է ավագ ընկեր լինել աշակերտի համար
12 օրհան



Աշակերտների մեծամասնությունը կարծում է, որ ուսուցիչը պետք է դասը վարի ինտերակտիվ, ժամանակակից զանազան մեթոդներով: Հարցման արդյունքը ցույց է տվել, որ տարբեր մեթոդներով իրականացնելով դասը, հոգեբանորեն լավ ազդեցություն կարող է ունենալ աշակերտների շրջանում:

Աշխատանքի առաջին հատվածում ներկայացրեցինք, հոգեկան գործընթացների մասին և՛ ճանաչողական, և՛ հուզականային: Հարցման մեջ նույնպես անդրադարձ կատարեցինք այս մասով: Աշակերտներին հարց ուղղվեց թե ուսուցիչը հոգեկան որ գործընթացների վրա կարող է ազդեցություն ունենալ: Աշակերտները տվել են հետաքրքիր պատասխան՝ կարծելով, որ ուսուցիչը ամենաշատը կարող է ազդել Կամքի և ընկալման վրա: Աշակերտների կարծիքով ուսուցիչը իր հոգեբանական, մանկավարժական հնարներով կարող է սովորողների մոտ զարգացնել Կամքի ուժ ունենալ, լինել հաստատակամ, ինքնավստահ և այլն:

Ուսուցիչը աշակերտի հոգեկան ո՞ր գործընթացների վրա կարող է ազդեցություն ունենալ, կարող էք ընտրել մի քանի տարբերակ
12 օրհան



Սակայն աշակերտները կարծում են որ ուսուցիչը մասամբ կարող է ազդեցություն ունենալ մասնագիտական կողմնորոշման վրա:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների լավ ընթացքի համար աշակերտները առաջարկել են իրենց տարբերակները: Ընհանուր կարծիքը հետևյալն էր.

Լինի փոխադարձ հարգանք ուսուցչի և աշակերտների միջև: Ղասը բացատրելու ժամանակ ուսուցիչը չպետք է զլանա և մանրակրկիտ բացատրի դասը հատկապես այն աշակերտների համար որոնք լավ չեն հասկացել: Կրթության ոլորտում կան ուսուցիչներ, ովքեր բարձր տոնով զայրանում են այն աշակերտների վրա ովքեր դասը չեն ընկալել

Չոգեբանական տեսանկյունից դա սովորողների մոտ հակակրանք է առաջացնում ուսուցչի մոտ ազդում է երեխայի զգացմունքների, և մյուս հոգեկան գործընթացների վրա: Ուսուցիչը պետք է ամեն օր աշխատի իր մոտեցումների վրա և չզլանա աշակերտներին դասը մի քանի անգամ բացատրելուց:

Չետազոտական մյուս մասը կատարել են աշակերտների ծնողները: Չարցադրումները գրեթե նույն էին: Ծնողների և աշակերտների տեսակետների մեջ կան և՛ իրար նման, և՛ տարբեր տեսակետներ: Առանձնանցները մի քանի կարևոր հարցեր կատարված հետազատությունից:


Չարցերից մեկը հետևյալն է. Ձեր երեխաները հաճույքով են գնում դպրոց թե ոչ: Մեծամասնությունը պատասխանել է հետևալը. կախված այդ օրը իր մոտ դաս ունեցող ուսուցչից: Այս փաստը կարող ենք կապել հոգեբանության հետ: Եթե օրինակ քիմիայի ժամին ուսուցիչը սխալ մեթոդիկա է ընտրում, պահի տակ զայրանում է աշակերտների վրա, դասարանում է տիրում է ոչ նորմալ մթնոլորտ: Այդ ամենը ազդում է աշակերտի հոգեբանության վրա: Եվ դա էլ կարող է պատճառ լինել որ աշակերտը դասի հաճույքով բարձր տրամադրությամբ չի գնում դպրոց, քանի որ այդ օրը իր դասացուցակում կան այն ժամերը որի ուսուցչիների հետ չի ուզում շփվել:

Այս Խնդիրը հաղթահարելի է, եթե ուսուցիչը և աշակերտը լինեն իրար հետ հանդուրժող, լսեն և հարգեն մեկը մյուսի կարծիքները և այլն:

Ծնողները կարծում են որ ուսուցիչները մեծ ազդեցություն են թողնում աշակերտների հոգեբանության վրա ցանկացած տարիքում, և կարող են իրենց դնել կյանքի ճիշտ ուղու վրա:

Չարցումներից մեկը եղել է հետևյալը. Պատահե՞լ է այնպիսի դեպք, երբ ձեր երեխան իրեն անհանգստցնող թեմաներով կիսվել է իր ուսուցչի հետ: Ծնողները պատասխանել են այսպես

Պատահե՞լ է այնպիսի դեպք, երբ ձեր երեխան իրեն անհանգստցունող թեմաներով կիսվել է իր ուսուցչի հետ
8 ОТВЕТОВ



Ինչպես աշակերտների շրջանում, այնպես էլ ծնողների մոտ կար հետևյալ հարցադրումը. Ուսուցիչը աշակերտի հոգեկան որ գործընթացների վրա կարող է ազդեցություն ունենալ: Ծնողների կարծիքով ուսուցիչը կարող է ամենաշատը ազդեցություն ունենալ սովորողների ուշադրության և մտածողության վրա: Այսինքն ուսուցիչները դասը պետք է վարեն այնպիսի հնարներով, մեթոդներով, որը շատ լավ կազդի աշակերտների ուշադրության վրա և կզարգացնի նրանց մտածողությունը:

Հարցման մեջ վերջին երկու հարցերը հետևյալն են. Ի՞նչ պետք է անի ուսուցիչը աշակերտին ճիշտ դաստիարակելու համար:

Ծնողները առաջարկում են հետևյալ տարբերակները

1. Ուսուցիչը պետք է միշտ առաջնորդվի մանկավարժական սկզբունքներով: Ամենակարևորը կրթությունից էլ առավել երեխայի հոգեկան առողջությունն է: Երեխային պետք է խրախուսել, ներգրավել, ոչ թե հոգեբանորեն ճնշել, յուրաքանչյուրի հանդեպ ունենալ անհատական մոտեցում:
2. Նվիրվի իր գործունեությանը և անհատական մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր աշակերտի
3. Աշակերտին չվիրավորի, խրախուսի լավ արդյունքի համար, լինի իր աշխատանքը սիրող, ուշադիր, և ցույց տա աշակերտի որ նա կարող է անել ամեն ինչ լավ արդյունքի հասնելու համար
4. Երեխան պետք է տանից դաստիարակված գնա, հարգի ուսուցչին, որ ինչ որ բան էլ սխալ անի ուսուցիչը կկարողանա ճիշտը բացատրել աշակերտին:
5. Սկզբում պետք է կառուցել ուսուցիչ-աշակերտ հստակ և ճիշտ հարաբերություններ, լինել օրինակ՝ ոչ միայն օրինակելի ուսուցչի, այլ նաև ծնողի, երեխայի և հնարավորինս շատ մարդկային դերերի... և այլն:

Եվ վերջում կարևոր հարցը, որ պատասխանեցին հետևյալն է. Ի՞նչպես է ուսուցիչը ազդում երեխայի հոգեբանության վրա: Ծնողներից շատերը առաջարկում են հետևյալ տարբերակները

1. Նկատողություն անելիս լինի շատ զգույշ, նրբանկատ, առանձին զրուցի,

2. չվիրավորի բոլորի մոտ, բոլորին չպիտակավորի: Հաճախ մի երեխա կամ երկուսը անկարգ են պահում, սկսում են բոլորին վիրավորել, պիտակավորել և կտրվում է կապը ուսուցչի և աշակերտի միջև:

3. երեխային վիրավորելով, չոգևորելով, թույլ կողմերը մատնանշելով

4. Երեխան իր ինքնագնահատականի և ինքնադրսևորման մեջ հաշվի է առնում նաև ուսուցչի վերաբերմունքն իր նկատմամբ, ուստի ուսուցիչը պարտավոր է ոգևորել և մոտիվացնել աշակերտին, ինտեգրել հասարակական, դպրոցային-կրթական և մշակութային ակտիվ կյանքին՝ նրան թերարժեքության զգացումից զերծ պահելու համար:

5. Ուսուցիչը պետք է կարողանա «լեզու» գտնի «այսօրվա» երեխաների հետ, որը կարծում եմ շատ բարդ աշխատանք է, եթե ուսուցիչը հոգեբանորեն կարողանա ազդել աշակերտի վրա, նա կկարողանա շատ բարդ հարցերի ճիշտ լուծում տալ: Օրինակ՝ առաջարկի դասից դուրս, գրուցի աշակերտի երազանքների, հակումների, հոբիների մասին և մասամբ ճանաչելով աշակերտին ճիշտ պահին, ճիշտ հոգեբանորեն կկարողանա ազդել երեխայի վրա:

6. Ուսուցիչը կարող է ազդել երեխայի տարրական հոգեբանությունից մինչ բարդ հոգեբանական գործընթացների վրա՝ կախված նրա մասնագիտական հմտություններից ու պրոֆեսիոնալիզմից. քանի որ երեխան բավական փոքր հասակից մինչև որոշակի հասուն տարիք անց է կացնում դպրոցում և ուսուցիչների միջավայրում, նա դպրոցից և ուսուցչից կարող է ժառանգել վարքի ամենապարզ դրսևորումներից մինչև մարդկային որակներ և նույնիսկ բնավորություն և այլն:

Ամփոփելով կատարված հետազոտությունը, կարող ենք փաստել, որ աշակերտի դաստիարակության գործում կարևոր դերակատարում ունի ուսուցիչը: Ուսուցիչը պետք է յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերի յուրահատուկ մոտեցում, քանի որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր երևակայական գունավոր աշխարհը: Ուսուցիչը ամեն տարիքի երեխաների հետ աշխատելիս պետք է հիշի ինքը մանուկ հասակում ինչպես է եղել ինչպես է ընկալել այս կամ այն երևույթը, որպեսզի կարողանա հասականալ աշակերտի հոգեբանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքը գրելիս եկանք հետևյալ եզրակացություններին.

1. Հոգեկան գործընթացները մարդու կյանքի անբաժանելի երևույթներն են իր ողջ կյանքի ընթացքում: Հոգեկան գործընթացների զարգացումը տեղի ունենում սկսած դպրոցական տարիներից:

2. Հոգեկան գործընթացները, մարդու ներաշխարհի գործունեության կարևոր բաղադրիչներն են: Առանց հոգեկան գործընթացների անհնար է մարդու գոյատևումը և գործունեությունը

3. Ամփոփելով վերը նշվածը կարող ենք ասել, որ Պատմության դասաժամին իրականացվող մեթոդները, հնարները մեծ ազդեցություն կարող են ունենալ մարդու հոգեկան գրեթե բոլոր գործընթացների հատկապես՝ Ուշադրության, մտածողության և ընկալման երևույթների վրա:

Ուսումնասիրելով ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերությունները վերը նշված հարցումներով կարող ենք եզրակացնել հետևյալը. Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները երկկողմանի գործընթաց է, և այդ կենդանի գործընթացի երկու կողմերն էլ փոխադարձաբար ներազդում, պայմանավորում ու ձևավորում են միմյանց: Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների առողջ լինելն առաջին հերթին կախված է նրանից, թե արդյոք աշակերտը կզգա, որ իրեն սիրում են: Այստեղից կձևվի սերն ու վստահությունն ուսուցչի նկատմամբ: Իսկ այդ հարաբերությունների սահմանը որոշողը հենց իրենք են՝ աշակերտն ու ուսուցիչը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արզումանյան Ս., Հոգեբանություն, Երևան, 2003թ:
2. Նալչաջյան Ա., Ընդհանուր Հոգեբանության հիմունքներ, գիրք 1 Երևան, 1991թ:
3. Պետրովսկի Ա.Վ. Ընդհանուր Հոգեբանություն., Երևան, 1974թ:
4. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ., Վարդանյան Կ., Աղաջանյան Հ., Հասարակագիտություն, 10-րդ դասարաի դասագիրք, Երևան, 2021թ:
5. <https://www.youtube.com/watch?v=tS5HmkqiIV0>
6. <https://www.youtube.com/watch?v=zjGTRfrHgcw>